ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.12.2021թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Ս.Մուխսիկարոյանը, Մ.Անտոնյանը, Լ.Հովհաննիսյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-21/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **« ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»** ԱՍՊԸ (ք. Երևան, Վարդանանց 16, 1/1)
2. **«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ** (ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50)
3. **«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ** (ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1)
4. **«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ** (ք. Երևան, Արամի 3, 5)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Հ/Հ	Անվանում	Գնման հայտով սահմանած գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/			
			«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	« ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

1	Փոխադրամիջոց ների հետ կապված ապահովագրակ ան ծառայություններ	3035000	3039000	3041000	3041000	3076000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցների առաջարկած գինը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2021թ. դեկտեմբերի 07-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝

Մեկ աշխատանքային օրում կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Ս. Մուխսիկարոյան

_____ Մ.Անտոնյան

_____ Լ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.12.2021թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը,
Գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Ս.Մուխսիկարոյանը, Մ.Անտոնյանը, Լ.Հովհաննիսյանը,
Գնահատողի քարտուղար Մ.Մուրադյանը,
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի լիազորված անձ Արշակ Ղազարյանը,
«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի լիազորված անձ, գործադիր տնօրենի տեղակալ Լևոն Մամիկոնյանը:

1.Միաժամանակյա բանակցությունների մասին

Բանակցության արդյունքում նվազեցված գներ

Հ/Հ	Անվանում	Գնման հայտով սահմանած գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/	
			«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
1	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ	3035000	3035000	3035000

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ընտրված մասնակից չկա:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի համաձայն ընթացակարգը հայտարարել չկայացած:
2. Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Ս. Մուխսիկարոյան

_____ Մ.Անտոնյան

_____ Լ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի
լիազորված անձ Արշակ Ղազարյանը _____

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի լիազորված անձ
գործադիր տնօրենի տեղակալ Լևոն Մամիկոնյանը_____